ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պ. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իմպերիալիզմի դարաշրջանում ինչպես Ռուսաստանի մյուս ծայրամասերում, այնպես էլ Հայաստանում գյուղացիության ու բանվոր դասակարգի տնտեսական և քաղաքական դրությունը ավելի է վատթարանում։ Ծանր էր հատկապես պղնձարդյունաբերական պրոլետարիատի դրությունը։ Հանքագործները օրական 12—14 ժամ աշխատում էին մութ ու խոնավ խորշերում, ուր ապահովված չէին տեխնիկական անվտանգության նվազագույն պայմաններ անգամ, ձուլարաններում բանվորներն աշխատում էին առանց հատուկ արտահագուստի՝ մշտապես ենթակա խեղանդամվելու վտանգին։ Անտանելի էին նաև բանվորների կենցաղային-բնակարանային պայմանները։ Նրանք ապրում էին կեղտոտ, գետնափոր հանրակացարաններում (20—25 մարդ մի սենյակում)։ Չնչին զանցանքների համար բանվորները ենթարկվում էին ծեծի ու տուգանքների, իսկ անհնազանդության որևէ նշան ցուցաբերելիս՝ անմիջապես հեռացվում աշխատանքից։

Բանվորները դաժանորեն շահագործվում էին հատկապես օտարերկրյա կապիտալիստներին պատկանող ձեռնարկություններում։ Հայաստանում այդպիսի ձեռնարկություններից ամենամեծը ֆրանսիական մոնոպոլիստների տնօրինության տակ գտնվող «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությունն» էր, որին էին պատկանում Ալավերդու հանքարդյունաբերական շրջանի գրեթե բոլոր պղնձի հանքերն ու գործարանները և Ղափանի հանքերի ու գործարանների զգալի մասը։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին նրանցում աշխատող բանվորների թիվը մոտավոր հաշիվներով 4—4,5 հազար էր։ Սակայն մինչև այժմ, որքան մեզ հայտնի է, պատմա-տնտեսագիտական գրականության մեջ չկան ստույգ տեղեկություններ ռուսական առաջին հեղափոխությունից հետո Հայաստանի արդյունաբերական առանձին ձեռնարկություններում աշխատող բանվորների թվի, նրանց աշխատանքային օրվա տևողության ու աշխատավարձի մասին։ Այս առումով հետաքրքրական են Ալավերդու պղնձարդյունաբերական բանվորներին վերաբերող տվյալները, որոնք պահվում են ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվի № 195 ֆոնդում։ Այդտեղ պահվող վիճակագրական տեղեկությունների ամենավաղ տվյալները վերաբերում են 1909 թ., ըստ որի՝ Ալավերդու պղնձարդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների և ծառայողների տեղաբաշխումը ուներ հետևյալ պատկերը. հանքարդյունաբերական վարչությունում և գրասենյակում հիշատակվում է 9 բանվոր, հանքերում՝ 899, որից 85-ը՝ անչափահաս, 55-ը՝ մանկահասակ, գործարաններում՝ 449, որից 5-ը՝ անչափահաս։ Բեռներ էին փոխադրում և զանազան սարքավորումների վրա աշխատում 125 բանվոր, 188 ենթավարպետ ու 32 ծառայող։ Այսպիսով, բանվոր-ծառայողների ընդհանուր քանակը հաս-

նում էր 1702 մարդու[1], որից 1482-ը (մեծամասնությունը) կազմում էր մշտական աշխատանք կատարող հանքափոր և պղնձագործ բանվորությունը։ Համանման վիճակագրական տեղեկություններից երևում է, որ 1910 թ. Ալավերդում մշտական և ժամանակավոր բանվորների ու ծառայողների թիվը եղել է 1656։ Մի այլ տեղեկության համաձայն՝ 1912 թ. Ալավերդում աշխատող բանվորների և ծառայողների թիվը հասել է 1945-ի[2]։

Շամլուղի հանքերում 1912 թ. աշխատել է 951 մարդ, Ախթալայում՝ 135։ Ըստ 1913 թ. տվյալների՝ Ալավերդու հանքերում ու գործարաններում աշխատել են 2039 բանվոր-ծառայող։ Նշված թվական տվյալները ցույց են տալիս, որ 1909—1913 թթ. Ալավերդու, ինչպես նաև Շամլուղի ֆրանսապատկան հանքերում ու գործարաններում մշտական ժամկետով աշխատել են մոտ 2000 բանվոր և ծառայող, իսկ Շահալի-Էլխիաբիի և Ախթալայի հանքերում ու գործարաններում՝ 600։ Տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ հանքարդյունաբերության մեջ կապիտալիստները լայնորեն օգտագործել են ոչ միայն անչափահասների, այլև երեխաների աշխատանքը։ Միայն Ալավերդում հանքաքարի տեսակավորման վրա աշխատում էին 35 անչափահաս և 55 փոքրահասակ երեխաներ, հանքերում՝ 50 անչափահաս, իսկ օժանդակ աշխատանքներում՝ 5 անչափահաս (ընդամենը՝ 145 հոգի)։ Ալավերդու հանքարդյունաբերական շրջանում մեծ թիվ էին կազմում օտարահպատակ բանվորները, որոնք գլխավորապես Պարսկաստանից եկած ադրբեջանցիներ էին։ Այսպես, օրինակ, 1911 թ. «Մանեսս» գործարանում աշխատում էին 124, Պիրիտիկ գործարանում՝ 10, Պիրիտիկ-Մանես ճանապարհի շինարարությունում՝ 15 պարսկահպատակներ[3]։

Հատկապես դաժան շահագործման էին ենթարկվում պարսկահպատակ բանվորները։ Նրանք օգտագործվում էին բարձր որակավորում չպահանջող աշխատանքներում, վարձատրվում անհամեմատ ցածր և մշտապես ենթակա էին վտարման։ Ձեռնարկատերերը նրանց չէին ապահովում հանրակացարաններով և ամեն քայլափոխի վիրավորում էին նրանց մարդկային արժանապատվությունը։ Պարսկահպատակ բանվորների վրա անգամ չէր տարածվում 1906 թ. հունիսի 2-ի «Տուժված բանվորների վարձատրության մասին»[4] խղճուկ օրենքը։

1908 թ. ֆրանսիական «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությունը» Զանգեզուրի կապիտալիստներից գնում է որոշ ձեռնարկություններ և ընդարձակում պղնձի արտադրությունը։ Հետագա տարիներին այն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում առանձին արդյունաբերողների ձեռնարկությունները, իսկ նոր ձեռնարկություններ հիմնադրելու նպատակով հողեր է գնում գյուղական համայնքներից[5]։

Չնայած Զանգեզուրի հանքերը պղնձով ավելի հարուստ էին, բայց ֆրանսիական կապիտալիստները մտահոգված էին գերազանցապես նոր հանքավայրեր ձեռք բերելու խնդրով և նվազ չափով էին շահագրգռված տեխնիկայի

---

1 ՀՍՍՀ կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ԿՊԱ), ֆ. 195, գ. 196, թ. 3։

2 Նույն տեղում, թթ. 5, 9, 11, 13, 15, 17, 19, 21, 23։

3 Նույն տեղում, գ. 288, թթ. 17—23։

4 Ա. Գրիգորյան, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960, էջ 17—18։

5 ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 113, գ. 1029, թ. 1։

կատարելագործմամբ։ Ինչպես վկայում են փաստաթղթերը, շատ հանքահորերում վագոնետկաների փոխարեն օգտագործվում էին կողովներ, որոնցով բանվորները հանքաքարը տանում էին հարյուրավոր մետրեր։ Աշխատավարձը համեմատաբար ցածր էր. հանքերում աշխատող բանվորի ամսական միջին աշխատավարձը կազմում էր 25,3 ռ.[6]։

1912 թ. հանքագործների թիվը Զանգեզուրում (Ղափան) հաշվվում էր շուրջ 1000 մարդ, որոնց մի մասը Պարսկաստանից եկածներ էին։ Վերջիններս հանքերում աշխատում էին ձմռան և գարնան ամիսներին, իսկ ամռանը վերադառնում էին հայրենիք՝ դաշտային աշխատանքներ կատարելու։ Նույնպիսի սեզոնային աշխատանք էին կատարում Զանգեզուրի հանքերին մերձակա հայկական և ադրբեջանական գյուղերի բնակիչները։ Բանվորների հիմնական մասը՝ (240—260 հոգի) պրոֆեսիոնալ հանքագործներ էին[7]։ Ծանր էին բանվորների տնտեսական, կենցաղային պայմանները։ Անտանելի պայմաններում աշխատելով 12 ժամ, նրանք ստանում էին 1 ռ. 30 կ.—1 ռ. 40 կ.[8]։ Զանգեզուրի հանքերից ամենաբարվոքը Ղաթարի հանքերն էրն, որտեղ հանքաքարը գուրս էր բերվում վագոնետկաների միջոցով։ Արտադրության պրոցեսն արագացնելու նպատակով սկզբում աշխատանքը եռահերթ էր, որը, սակայն, սպասված արդյունք չտալու պատճառով փոխարինվեց երկհերթ սիստեմով (գործարքային ձևով)։ Գործարքային ձևը ձեռնարկատերերի համար հսկողության ավելի ձեռնտու և հարմար եղանակ էր։ Այն բանվորներին ստիպում էր կրճատելու պայթուցիկ նյութի «շռայլումները». վճարումները կատարվում էին հանքաքարի հանույթի չափին համապատասխան։ Օտարերկրյա, ինչպես նաև տեղական ձեռնարկատերերը ձգտելով առավելագույնն ստանալ բանվորների շահագործումից, ամենևին չէին մտահոգվում հանքահորերում և գործարաններում տեխնիկական անվտանգության ապահովման հարցերով։

1912 թ. հոկտեմբերի 30-ին Կոնդուրով եղբայրների Զանգեզուրի պղնձահանքերի գրասենյակում կազմված արձանագրությունում նշված է, որ հակառակ ընդունված կանոններին, ինչպես նաև բանվորների անվտանգությունն ապահովելու նպատակով գործող պղնձահանքերում երկրորդ ելք բացելու մասին օկրուգային ինժեների 1912 թ. հունիսի 14-ի կարգադրությանը, մինչև արձանագրություն կազմելու օրը երկրորդ ելք չի բացվել[9]։

Աշխատանքի տեխնիկական անվտանգության բացակայության պատճառով դժբախտ պատահարների թիվը գնալով աճում էր։

Ալավերդիում և ընդհանրապես «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» Հյուսիսային Հայաստանում գտնվող ձեռնարկություններում բանվորների դրության, աշխատավարձի, ապահովագրման, տեխնիկական անվտանգության վիճակի, հետևապես և բանվորների անձնական անվտանգության պայմանների մասին որոշ տեղեկություններ են հաղորդում «Ընկերության» կազմած «Դժբախտ պատահարների» ամենամյա գիրք-մատյանները։

6 Նույն տեղում, ֆ. 195, գ. 377, թ. 11։
7 Նույն տեղում, թ. 1։
8 Նույն տեղում։
9 Центральный государственный исторический архив Груз. ССР, ф. 256, д. 159, л. 2.

Սակայն բոլոր պատահարները չէ, որ արձանագրվում էին գիրք-մատյաններում։ Նրանցում աշխատունակության վերականգնման նշված աստիճանը, որպես կանոն, չէր համապատասխանում իրականությանը։ Հաճախ բանվորը խեղանդամ էր դառնում, սակայն արձանագրվում էր, թե մասամբ է կորցրել աշխատունակությունը։

Առկա տվյալները ցույց են տալիս, որ 1910 թ. դեկտեմբերից մինչև 1917 թ. մարտը տեղի է ունեցել 482 դժբախտ պատահար[10]։ Սակայն իրականում դրանց թիվն ավելի մեծ էր, քանի որ «Դժբախտ պատահարների» ամենամյա գիրք-մատյաններում գրանցվում էին միայն ծանր պատահարները և, բացի այդ, չէին գրանցվում Շահալի էլխիաբի և Սիսի-Մագանի հանքերի ու գործարանների բանվորների հետ տեղի ունեցած պատահարները։ Հետևաբար, ֆրանսպատկան ձեռնարկություններում տարեկան 100 պատահարը սովորական երևույթ էր։

Պատահարների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց պատճառը տեխնիկական անվտանգության տարրական միջոցների բացակայությունն էր։

Հանքերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև կովկասյան օկրուգային ինժեներ Ցեյտլինի դիտողությունները, որը ուսումնասիրելով հանքերում տիրող գրությունը, նշում է՝ շատ հանքերում տեխնիկական անվտանգության կանոնները չեն ապահովվում. էլեկտրական ապահովիչները և հաղորդալարերը հանքախորշերում այնքան ցածր են կախված, որ ամեն րոպե բանվորների հետ կարող է դժբախտություն պատահել, հանքախորշերը շատ նեղ են և վագոնետկաները հազիվ են անցնում, ջերմության քանակը նորմայից շատ բարձր է և առողջության համար միանգամայն վտանգավոր։

Ցեյտլինն ուսումնասիրել է նաև բանվորների բնակարանային պայմանները, արել դիտողություններ, որոնցից երևում է, որ ամենուրեք տիրում էր հակասանիտարական, անմխիթար վիճակ։

Բանվորների բողոքների քննարկման ժամանակ վերահսկիչը, որպես կանոն, անցնում էր ձեռնարկատերերի կողմը կամ աշխատում ձեռնարկատերերի հետ հաշտեցնել աշխատանքում աշխատունակությունը կորցրած բանվորներին[11]։

Սակայն բանվորներին միայն խոստումներով չէր կարելի «համոզել»։ Նրանց մոտ աստիճանաբար հասունանում էր այն միտքը, որ անհրաժեշտ է ձեռնարկատերերի անմարդկային վերաբերմունքին պատասխանել կազմակերպված պայքարով։ Ինչպես 1905—1907 թթ., այնպես էլ ռեակցիայի և հեղափոխական նոր վերելքի տարիներին Ալավերդու բանվորների պայքարը գլխավորում էին ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը և նրա տեղական բջիջները։ Նրանց ղեկավարությամբ է, որ հանքագործները տնտեսական և քաղաքական մի շարք գործադուլներ կազմակերպեցին։

10 Պատահարների առաջին գիրքն ավարտվում է № 607 պատահարի գրանցումով, որը տեղի է ունեցել 1914 թ. հունվարի 18-ին։ «Դժբախտ պատահարների» հաջորդ գիրքը սկսվում է 1914 թ. հունվարի 21-ին տեղի ունեցած № 608-րդ պատահարի նկարագրությամբ։ 1915 թ. հունվարի 21-ին գրանցված է № 720-րդ պատահարը։ 1916 թ. հունվարի 21-ին գրանցված է № 778-րդ պատահարը։ (Նույն տեղում, թթ. 1, 14, 172, 238)։ 1917 թ. հունվարի 19-ին տեղի է ունեցել № 844 պատահարը։ Հաշվառման այս գիրքն ավարտվում է № 846-րդ պատահարի գրանցումով, որը տեղի էր ունեցել 1917 թ. մարտի 3-ին (Նույն տեղում, թ. 498)։

11 Նույն տեղում, գ. 475, թ. 5։

Այսպիսով, վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ XX դ. առաջին տասնամյակներում Հայաստանի պղնձարդյունաբերության ձեռնարկությունների բանվորները գտնվում էին աշխատանքային անապահով, վատթար պայմաններում և ենթարկվում օտարերկրյա և տեղական կապիտալի անլուր շահագործմանը։

ИЗ ИСТОРИИ МЕДНОПРОМЫШЛЕННОГО ПРОЛЕТАРИАТА АРМЕНИИ

П. П. АРУТЮНЯН

Резюме

Сохранившиеся документы раскрывают тяжелое экономическое и правовое положение трудящихся досоветской Армении. Особенно жестокой эксплуатации подвергались рабочие, в том числе малолетние дети, на предприятиях меднорудной промышленности Алаверди и Кафана, принадлежащих иностранным капиталистам.